



# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ

30 ապրիլի 2025 թվականի թիվ 46-Լ

ք. Երևան

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 05-ի «Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով ժամանակավոր մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը սահմանելու մասին» թիվ 120-Ա որոշմամբ՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց՝**

- |           |  |  |
|-----------|--|--|
| 1. Դիմել՝ | Սամվել Սևադա<br><br>Րաֆֆի Մովսիսյան<br>Էլմիրա Արսենյան<br>Սեյրան Շահումյան<br>Գրիգոր Խաչատրյան | գեղանկարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ<br>ռեժիսոր, կինոքննադատ<br>հաղորդավար, պրոդյուսեր<br>ռեժիսոր, ՀՀ վաստակավոր լրագրող<br>ԵԴԹ, գլխավոր ռեժիսոր |
|-----------|--|--|

Անուն, Ազգանուն

Զբաղեցրած պաշտոն կամ մասնագիտություն

թվով 5 թեկնածուներին՝ Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով ժամանակավոր մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար:

2. Տեղեկացնել մրցութային հանձնաժողովում թեկնածու ընդգրկված անձանց՝ իրենց համաձայնությունը ստանալու համար:

3. Նշված աշխատանքների կատարման համար սահմանել եռօրյա ժամկետ:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈՔՅԱՆ**

30 ապրիլի 2025թ.  
ք. Երևան